# ՀՈՒՇԱԳԻՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն) եւ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակը (այսուհետ՝ ԵԱՀԿ), այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով, որ ԵԱՀԿ-ն ցանկանում է երկարաժամկետ օգնություն ցուցաբերել Ոստիկանությանը Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական ոստիկանական գործելակերպ զարգացնելու հարցում,

հաշվի առնելով, որ Կողմերը գիտակցում են Ոստիկանության եւ բնակչության միջեւ փոխվստահության եւ գործակցության խորացման կարեւորությունը համայնքահեն ոստիկանական ծառայության միջոցով հանցագործությունների կանխման եւ բացահայտման հարցում,

հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են Հայաստանում Ոստիկանության եւ բնակչության կարիքներին համահունչ եւ միջազգային չափանիշներին համապատասխանող ոստիկանական կրթական համակարգ մշակելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով, որ ԵԱՀԿ-ն ցանկանում է աջակցել Ոստիկանությանը վերջինիս՝ հասարակական կարգի պահպանման կարողությունների ամրապնդման հարցում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

## Հոդված 1

## Ոստիկանություն-բնակչություն գործընկերության ամրապնդման հարցերով աշխատանքային խմբի ստեղծումը

1. Սույն Հուշագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, Կողմերը կստեղծեն Ոստիկանության եւ ԵԱՀԿ-ի համատեղ աշխատանքային խումբ: Նշված խումբը իր առաջարկությունների եւ համաձայնեցված գործողությունների միջոցով նպաստելու է ոստիկանություն-բնակչություն՝ Հայաստանում կիրառելի գործընկերության ամրապնդմանն ուղղված մոդելի ընդունման գործընթացին՝ հաշվի առնելով Ոստիկանության Արաբկիրի բաժնում ներկայումս իրականացվող համայնքահեն ոստիկանության փորձնական ծրագրից ստացված արդյունքները:

2. Աշխատանքային խումբը համանախագահելու են Ոստիկանության պետի տեղակալներից մեկը եւ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ռազմաքաղաքական հարցերով պատասխանատուն:

3. Աշխատանքային խմբի համանախագահների առաջարկությամբ աշխատանքային խմբի անդամներ համատեղ նշանակվելու են Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետի եւ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ղեկավարի կողմից:

Աշխատանքային խմբում պետք է ընդգրկվեն Ոստիկանության Արաբկիրի բաժնի պետը, Ոստիկանության Արաբկիրի բաժնի տեղամասային փորձնական ստորաբաժանման համակարգողը եւ ԵԱՀԿ ոստիկանության գծով փորձագետները:

4. Աշխատանքային խմբի անդամները պետք է ուսումնասիրեն համայնքահեն ոստիկանության եւ համայնքների անվտանգության ապահովման հետ կապված գործողությունները՝ խմբի շրջանակներում իրենց աշխատանքը առավել նպատակահարմար եւ արդյունավետ դարձնելու նպատակով:

5. ՏՈՍ-ի գործունեության եւ համայնքահեն ոստիկանության լավագույն գործելակերպի հիման վրա աշխատանքային խումբը կմշակի ոստիկանություն-բնակչություն գործընկերության ամրապնդմանն ուղղված այնպիսի մոդելի ներմուծման վերաբերյալ առաջարկություններ, որը կիրառելի է Հայաստանում:

6. Աշխատանքների ընթացքի մասին միջանկյալ հաշվետվությունը կքննարկվի Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի հետ՝ աշխատանքային խմբի ստեղծումից երեք ամիս անց:

7. Վերջնական հաշվետվությունը՝ առաջարկության հետ մեկտեղ կներկայացվի

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարին աշխատանքային խմբի ստեղծումից վեց ամիս անց:

Հոդված 2

Ոստիկանության կրթական համակարգի բարելավման հարցերով աշխատանքային խմբի ստեղծումը

1. Ոստիկանության կրթական համակարգը բարելավելու նպատակով սույն Հուշագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, կստեղծվի Ոստիկանության եւ ԵԱՀԿ-ի համատեղ աշխատանքային խումբ: Խումբը մշակելու է ոստիկանության կրթական համակարգի բարեփոխումների ռազմավարությունը՝ հիմնված Ոստիկանության եւ բնակչության գործընկերության վրա:
2. Աշխատանքային խումբը համանախագահելու են Ոստիկանության ուսումնական կենտրոնի պետը եւ ԵԱՀԿ քարտուղարության՝ ոստիկանության ռազմավարական հարցերով ստորաբաժանման՝ ոստիկանության գծով պատասխանատուն:
3. Աշխատանքային խմբի համանախագահների առաջարկությամբ աշխատանքային խմբի անդամները համատեղ նշանակվելու են Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետի եւ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ղեկավարի կողմից:
4. Աշխատանքների ընթացքի մասին միջանկյալ հաշվետվությունը կքննարկվի Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի հետ՝ աշխատանքային խմբի ստեղծումից երեք ամիս անց:
5. Վերջնական հաշվետվությունը՝ առաջարկությունների հետ մեկտեղ, կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետին եւ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ղեկավարին աշխատանքային խմբի ստեղծումից վեց ամիս անց:

Հոդված 3

Առաջարկությունների իրականացումը

Վերը նշված աշխատանքային խմբերի վերջնական առաջարկությունները Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հետ համաձայնեցնելուց հետո Ոստիկանության հետ կմշակվի "Իրականացման մասին" համաձայնագիր, որտեղ կսահմանվեն առաջարկությունների իրականացման ժամանակացույցը եւ Ոստիկանության եւ ԵԱՀԿ համապատասխան պարտականությունները:

Հոդված 4

Հասարակական կարգի պահպանումը

Կարիքները, ժամանակացույցը եւ անհրաժեշտ ֆինանսական միջոցները որոշելու նպատակով ԵԱՀԿ-ն կանցկացնի գնահատում՝ հասարակական կարգի պահպանման հարցում օգնություն տրամադրելու համար: Կարիքների գնահատման եզրակացությունը ծառայելու է որպես հիմք այս ոլորտում ԵԱՀԿ կողմից հետագա օգնության համար:

Հոդված 5

Համագործակցությունը այլ կազմակերպությունների եւ պետությունների հետ

ԵԱՀԿ-ն տրամադրվող իր օգնությունը կհամաձայնեցնի Ոստիկանության հետ՝ խուսափելու միջոցների օգտագործման ընթացքում մասնակի համընկնումներից, կրկնություններից, անարդյունավետությունից կամ վերացնելու դրանք: Ոստիկանությունը իր կողմից կտեղեկացնի ԵԱՀԿ-ին ոստիկանությանը տրամադրվող ցանկացած տեսակի օգնության մասին, որն առնչվում է սույն Հուշագրի առարկային:

Հոդված 6

Այլ տեսակի օգնությունը

Ոստիկանության խնդրանքով՝ ԵԱՀԿ-ն պատրաստ է տրամադրելու ցանկացած այլ տեսակի օգնություն իր մանդատի եւ ֆինանսական միջոցների շրջանակներում:

Հոդված 7

Վեճերի կարգավորումը

Սույն Հուշագրի մեկնաբանումից, կիրարկումից եւ (կամ) կիրառումից ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ պահանջները Կողմերի միջեւ կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 8

Փոփոխությունները

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Հուշագրի 9-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն եւ կազմում են դրա անբաժանելի մասը:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը եւ դադարեցնելը

1. Սույն Հուշագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին գրավոր ծանուցումը ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ստանալու օրվանից եւ վավերական է անորոշ ժամկետով:
2. Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից մեկի՝ այդպիսի մտադրության մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Սույն Հուշագիրը ստորագրվել է Երեւան քաղաքում 2008 թվականի նոյեմբերի 27-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ անգլերեն: Երկու տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Հուշագիրը ուժի մեջ է մտել 2009 թ. հունվարի 13-ին: